Իմ անունն է Ջուն Յամադա: Ես ժամանել եմ Երևան մայիսի 27-ին՝ իբրև Ճապոնիայի դեսպան: Այս գեղեցիկ երկիր իմ վերջին այցից անցել է 22 տարի, բայց այս տարիների ընթացքում ես հիացել եմ նրա հնագույն պատմությամբ և հայկական մշակույթի նրբագեղությամբ, որոնք ձևավորում են այստեղի ժողովրդի ինքնությունն ու հպարտությունը: Ինձ համար մեծ պատիվ և իրական բախտ է ունենալ երկու երկրները կրկին միմյանց հետ կապելու հնարավորություն:

Անցյալ տարի լրացավ Ճապոնիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը: Ճապոնիայի դեսպանությունը ավելի քան 3 տարի գործում է Երևանում, և լավ հեռանկարներ կան Ճապոնիա-Հայաստան ներդրումային համաձայնագրի հնարավորինս արագ ուժի մեջ մտնելու համար: Իսկապես, մեր երկկողմ հարաբերությունները քվանտային թռիչք գրանցելու եզրին են:

Հայ և ճապոնացի ժողովուրդներն ունեն մի շարք ընդհանուր հատկանիշներ, բայց ես կարծում եմ, որ համառության և կամքի շնորհիվ ոչնչից նոր բան ստեղծելու կարողությունը՝ հույսը չդնելով արտաքին ռեսուրսների վրա, մարմնավորում է դրանցից ամենաորոշիչը, որը համընդհանուր կարևորություն ունի երկու երկրների սահմաններից դուրս:

Այսօր աշխարհն արագորեն փոքրանում է տեխնոլոգիաների տեկտոնիկ առաջընթացի շնորհիվ, որում հայերը լավագույնս դրսևորում են իրենց տաղանդը: Սա նշանակում է, որ մոլորակի բոլոր երկրներն ու ժողովուրդները դառնալու են «անմիջական հարևաններ»: Կանխատեսելով նման աշխարհի ժամանումը՝ մենք պետք է օրեցօր ջանանք դառնալ ամենաջերմ հարևաններն այդպիսի աշխարհում:

Անկեղծորեն ցանկանում եմ խնդրել ողջ հայ ժողովրդին, ինչպես նաև այն ճապոնացիներին, ովքեր առնչվել են այս հիասքանչ երկրի հետ, դեսպանությանը հայտնել ձեր կարծիքներն ու խորհուրդները:

Շնորհակալություն

27 մայիսի, 2018

Ջուն Յամադա